

01.09.2016թ.

Մևան համայնքի ղեկավար Ռ. Ղուկասյանի ուղերձը նոր ուսումնական տարվա կապակցությամբ

Միրելի՛ աշակերտներ, ուսանողներ,

Հարգարժան մանկավարժներ, կրթության բնագավառի նվիրյալներ,

Հարգելի ծնողներ

Գիտելիքի և խաղաղության օրվա՝ Սեպտեմբերի 1-ի առթիվ ընդունեք իմ, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքի ավագանու բարեմաղթանքներն ու շնորհավորանքները:

Մեկնարկում է հերթական՝ 2016-2017 ուսումնական տարին, որն ազդարարում է նոր ծրագրերի, կրթական ոլորտում իրականացվող ձեռնարկների ու բարեփոխումների մասին:

Առաջին զանգի դողանջով աշակերտների ու սովորողների առջև կրկին իրենց դռներն են բացել համայնքի հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցները, պետական քոլեջը, արհեստագործական ուսումնարանը:

Միրելի աշակերտներ, վստահ եմ, որ սպասում էիք նոր ուսումնական տարվան ու հարազատ կրթօջախներ ոտք էք դնում թարմ ուժերով, նորի ակնկալիքով ու սպասումներով:

Միրելի 1-ին դասարանցիներ, այսօրը ձեզ համար ոչ միայն տոնական է, այլ նաև հուզիչ ու փոքր-ինչ անսովոր: Առաջին անգամ ոտք էք դնում մի օջախ, որտեղ պիտի անցնեն ձեր մանկության ու պատանեկության տարիները: Շնորհավորում եմ ձեր նորամուտը, որը տոն է նաև ձեր ընտանիքների համար: Թող սերը գրի ու դպրության, գրքի ու գիտելիքի հանդեպ լինի անսահման:

Նոր ուսումնական տարվա առթիվ շնորհավորանքներս եմ հղում համայնքի ուսանողներին. պատվով կրեք այդ անունը՝ ուսումնառության տարիները դարձնելով իմաստավորված, զինվեք գիտելիքների հարուստ պաշարով, գնացեք առաջ վստահ քայլերով, որովհետ մեր քաղաքի, մեր երկրի վաղը նաև ձեր ձեռքերում է, ու առաջընթացն էլ պայմանավորված է ձեր գիտելիքներով, իմացությամբ:

Հարգելի մանկավարժներ, շնորհավորում եմ ձեզ նոր ուսումնական տարվա կապակցությամբ: Անկախ ձեր աշխատանքային կենսագրությունից ու

փորձառությունից՝ սեպտեմբերի 1-ը ձեզ համար անկրկնելի է, սկիզբ նոր բացահայտումների:

Մաղթում եմ ձեզ առողջություն, բարեկեցություն, եռանդ ու համբերություն:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ բոլորիս՝ Գիտելիքի և խաղաղության օրվա առթիվ: Գիտելիքն ու խաղաղությունը շաղկապված են, որովհետև միայն խաղաղ պայմաններում է հնարավոր ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ և այդ գիտելիքները ի նպաստ դնել մեր երկրի բարօրության ու զարգացման գործին:

Մաղթում եմ բոլորին գիտելիքներով, իմացությամբ, ձեռքբերումներով, նորանոր ձեռնարկներով ու ծրագրերով հազեցած տարի: Երկիրը ուժեղ է խելացի, գրագետ, հայրենասեր մարդկանցով. ես ցանկանում եմ, որ այդ ուժի կրողը լինեք նաև դուք:

Միբեյի աշակերտներ և ուսանողներ

Գիտելիքի և խաղաղության օրվա սեպտեմբերյան մեկնարկով թող բացվեն իմացության, ձեռքբերումների, աշխարհաճանաչման նորանոր արահետներ, որով անցնելու եք դուք՝ հարթելով մեր պետության կայացման ուղին, դառնալով մեր երկրի խաղաղության ապահովման երաշխավորը: